

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2017-8-5-Ա

ք. Երևան

20.12.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի դեկտեմբերի 20-ի նիստում քննարկեց 2017 թվականի նոյեմբերի 22-ին «Գլանց» ՍՊԸ-ի (Երևան, Մաշտոցի 10, բն. 6) ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանի կողմից ներկայացված «Glanz» (No20170680) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված համակցված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «GLANZ» («Վան-չարտեր» ՍՊԸ, ք. Երևան, Զաքյան 3, բն. 84, AM, N 24134, գր. 22.02.2016) և միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «Glanzer» (Werner & Mertz GmbH Rheinallee 96 55120 Mainz (DE), IR 629489, գր. 07.12.1994) ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 120-րդ կետի 10-րդ ենթակետի, 130-րդ, 132-րդ, 133-րդ կետերի

համաձայն համեմատվող ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանի «GLANZ» բառային տարրը ներառված է գրանցված ապրանքային նշանի մեջ: Համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցրած: Այս դեպքում նման տարր է հանդիսանում համեմատվող համակցված ապրանքային նշաններում ներառված «GLANZ» բառը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն հայտարկված համակցված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «GLANZ» («Վան-չարտեր» ՍՊԸ, ք. Երևան, Զաքյան 3, բն. 84, AM, N 24134, գր. 22.02.2016) և միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «Glanzer» (Werner & Mertz GmbH Rheinallee 96 55120 Mainz (DE), IR 629489, գր. 07.12.1994) ապրանքային նշաններին: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանի «GLANZ» բառային տարրը ներառված է գրանցված ապրանքային նշանի մեջ:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի ներկայացրած նախնական կարծիքի հետ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումը իրավաչափ է և բաժինը որոշումը կայացրել է ելնելով օրենքի դրույթներից:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

## Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Գլանց» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ալեքսանդր Ամարյանի կողմից ներկայացված «Glanz» (No20170680) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ